ԹԵՄԱ 7

ԱՇԽԱՐՀԻ ԲՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

ԴԱՍ 7.5 Կլիմայական և տիեզերական ռեսուրսներ

1. Մերձարևադարձային գոտում (4000–8000° C) ջերմասեր մշակաբույսերի աճեցման վեգետացիոն շրջանը երկարատև է: Ջերմային ռեսուրսներն ամենից բարձր են արևադարձային կլիմայական գոտում՝ 8000° C–ից ավելի, որտեղ հնարավոր է շուրջտարյա հողագործություն:

Սակայն ջերմային ռեսուրսներն ամենուրեք չեն լրացվում համապատասխան խոնավությամբ, և հողերը ոռոգման կարիք ունեն: Տարածքի կլիմայական ռեսուրսների գնահատման համար հիմնականում 3–4 ցուցանիշ է օգտագործվում՝ ջերմությունը, խոնավությունը, լույսը, վեգետացիոն շրջանի տևողությունը և այլն:

2. Երկրագնդի կլիմայական պայմանների վրա առանձնակի բացասական ազդեցություն է թողնում մարդու տնտեսական գործունեությունը, հատկապես՝ արդյունաբերությունն ու տրանսպորտը: Արդյունաբերական թափոնների, գազերի, ծխի, փոշու ու մրի քանակությունը մթնոլորտում տարեցտարի ավելանում է և բացասական ազդեցություն թողնում մարդու օրգանիզմի վրա: Բայց խոնավ հասարակածային անտառների, անապատների, բարձրլեռնային և հյուսիսային ցուրտ շրջաններում էլ մարդու կյանքի և ապրելակերպի համար կլիմայական պայմանները բարենպաստ չեն՝ հեղձուցիչ տոթ է, գերխոնավություն, բարձր ջերմաստիճան, շոգ ու փոշի, ցրտաշունչ եղանակ, բևեռային ցերեկներ և գիշերներ: